քում պէտք է անցնէին նրանք, մինչեւ արժանապատոութիւն ստանային անապատը մտնելու: Գլխաւոր պայմաններից մէկն էլ այն էր, որ նրանք պէտք է կատարեալ հասակի հասնէին, մօրուքները աճէր, որովհետեւ անմազ երեսով պատանիներին արգելուած էր անապատը մտնէը:

Տեսնելով այդ գունաթափ, հալումաշ եղած թշուառներին, ես սաստիկ ցաւ զգացի: «Անմե՛ղ զոհեր, մտածում էի ես, ո՞ր սատանան մոլորեցրեց ձեզ այստեղ գալ. միթէ՞ աշխարհը այնքան վատ էր, որ դուք վճռեցիք փախչել նրանից»:

Վարպետ Փանոսը, որպէս պատոիրել էինք, նախապէս հոգացել էր մեր մասին եւ մեր ձիաները ուղարկել էր այստեղ: Մենք շատ չուշացանք, պատոիրեցինք, որ ձիաները շուտով պատրաստեն:

Այստեղ Բերզէն-օղլին տեղեկացաւ, որ իր նաւակը, ցամաքի ժայռերին զարկոելով, խորտակոել էր: Նա այնքան տխրեց, որպսես իր սիրուհին կորցրած մի սիրահար:

— Դուք ձեր վնասը կը ստանաք ինձանից, — ասաց նրան Ասլանը, երբ մենք բաժանոեցանք միմեանցից:

Բերզէն-օղլին մնաց այնտեղ, պէտք է ոտքով գնար Աւանց գիւղը: Իսկ ես եւ Ասլանը մեր ձիաններով սկսեցինք դիմել դէպի Այգեստան:

Ճանապարհին միայն ես առիթ ունեցայ յայտնելու Ասլանին այն անցքը, որ գիշերը պատահեց Աւանց գիւղում, նաւաստիի տանը: Մի ըստ միոջէ պատմեցի, թէ ինչպէս դուրս եկաւ նրա կինը, ինչպէս ման եկաւ բակի մէջ, ինչպէս գնաց մինչեւ ծովեզրը եւ, վերադառնալուց յետոյ՝ ինչպէս մօտեցաւ, նստեց իմ մօտ եւ սկսեց պատմել իր ամուսնի եղեռնագործութիւնը:

Ասլանը, մի առանձին հետաքրքրութեամբ այդ բոլորը լսելուց յետոյ, ասաց ինձ.

— Այդ մարդը մի ժամանակ ծովային աւազակ է եղել... Բայց ազնիւ մարդ է...

ԺԲ. ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ճանապարհին Ասլանը մի քանի հետաքրքիր տեղեկութիւններ հաղորդեց Կտուց անապատի անցեալի մասին, որոնք ինձ այնքան գրաւեցին, որ ես խորին ափսոսանքով սկսեցի իմ մտքում դատապարտել ինձ, թէ ո՛րքն ապարդիւն կերպով ես վատնել եմ իմ պատանեկութեան ամենաթանկագին ժամանակը, երբ կարող էի շատ բան սովորել եւ շրջապատող երեւոյթները